Հայտարարված է 12.03.2019թ.

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎՅԱԼ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ /ԾԱԾԿԱԳԻՐ՝ 62-3.2-26 /

1. Մասնակցում է միջհամայնքային հասարակական տրանսպորտի աշխատանքի, մարզային ենթակայության տրանսպորտային կազմակերպությունների գործունեության կազմակերպման աշխատանքների, ներմարզային հասարակական տրանսպորտի սպասարկման իրավունքի հատկացման մրցույթների գործընթացի կազմակերպմանը.

- մասնակցում է մարզային նշանակության ճանապարհների, կամուրջների, թունելների և այլ ինժեներական կառույցների շինարարության, պահպանման և շահագործման, աջակցում է հանրապետական նշանակության ճանապարհների շինարարության պահպանման և շահագործման աշխատանքների կազմակերպմանը
- իր իրավասության սահմաններում տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցելով՝ մասնակցում է ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառի գործունեության կառավարման համակարգմանը
- ավտոմոբիլային ճանապարհների ձմեռային, ընթացիկ պահպանության ու շահագործման աշխատանքների մակարդակի գնահատման և ընդունման մեթոդիկայի համաձայն մասնակցում է պետական բյուջեով նախատեսված մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային, ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքների կազմակերպմանը և ընդունմանը
- մասնակցում է մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ցանցի զարգացման, շինարարության, նորոգման և պահպանման ծրագրերի մշակմանը և իրականացմանը
- ներմարզային երթուղիներով փոխադրողների ընտրության մրցույթների արդյունքներով, մարզպետի որոշմամբ, մասնակցում է պայմանագրերի կնքման աշխատանքներին՝ փոխադրող կազմակերպությունների հետ.
- մանակցում է մարզային ենթակայության ավտոճանապարհների և դրանց ճանապարհային երթևեկության կահավորանքի շինարարության, շահագործման, նորոգման և պահպանման աշխատանքների կատարման նկատմամբ հսկողության իրականացմանը.
- մասնակցում է մարզային ավտոճանապարհների պահպանության պահանջվող մակարդակների գնահատման աշխատանքներին.
- մասնակցում է մարզային ավտոճանապարհների վիճակի ուսումնասիրության և դրանց դասակարգման աշխատանքներին ըստ գործող կարգի
- մասնակցում է եղանակային պայմանների, մարզի ավտոճանապարհներին տիրող իրավիճակի, ավտոտրանսպորտի անցանելիության տեղեկատվության հավաքագրմանը

- մասնակցում է մարզային ավտոճանապարհների պաշտպանական գոտիներում տարբեր շինությունների, կոմունիկացիաների և գովազդների տեղադրման օրինականության ուսումնասիրության աշխատանքներին, անհրաժեշտության դեպքում առաջարկություն ներկայացնում տեղադրման թույտվությունների ուղղությամբ
- մասնակցում է մարզային ավտոճանապարհների պահպանության և շահագործման աշխատանքների նկատմամբ պարբերական հսկողության իրականացմանը
- մասնակցում է մարզային ճանապարհների աշխատանքների համար կապալառու կազմակերպությունների և ներմարզային երթուղիներով ուղևորափոխադրող կազմակերպությունների ընտրությունների մրցույթների նախապատրաստական աշխատանքներին
- իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

2. Աշխատավարձը կազմում է 150799 /Հարյուր հիսուն հազար յոթ հարյուր իննսունինը / ՀՀ դրամ :

3. Աշխատավայրը՝ ք. Արտաշատ, Օգոստոսի 23/60 /Արարատի մարզպետարան / , հեռ. 023524511, Email-ararat.andznakazm@mta.gov.am

4. Կնքվում է ժամկետային աշխատանքային պայմանագիր մինչև սահմանված կարգով թափուր պաշտոնի վերանալը:

Նշված ժամանակավոր թափուր պաշտոնը ժամկետային աշխատանքային պայմանագրով զբաղեցնելու համար պահանջվում է՝

- **բարձրագույն կրթություն,**
- <u>քաղաքացիական ծառայության առաջատար պաշտոններում կամ համայնքային ծառայության պաշտոններում առնվազն մեկ տարվա ստաժ, կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ ՀՀ համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, կամ առնվազն երկու տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ մինչև 2020 թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ.</u>
- Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Քաղաքացիական ծառայության մասին», «Տրանսպորտի մասին», «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին», «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների անհրաժեշտ իմացություն
- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Դիմող ՀՀ քաղաքացիները փաստաթղթերը ներկայացնում են անձամբ կամ էլեկտրոնային փոստի միջոցով:

Ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

- տվյալ տաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի /ների/,վկայականի /ների/, աշխատանքային գրքույկի (վերջինիս

բացակայության դեպքում՝ անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները՝ բնօրինակների հետ միասին.

- արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր և զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին կամ համապատասխան տեղեկանք
- մեկ լուսանկար 3x4 սմ չափսի
- անձնագրի պատճենը:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 15.03.2019թ.